

տակար կլինէր ոչ միայն հոգեւորականներին, այլ և եպիսկոպոսական իշխանութեան համար: Ընտրուած գործակալներին շնորհիւ եպիսկոպոսն աւելի սերտ կը կապուէր հոգեւորականութեան հետ, կը ճանաչէր նրա կարիքները, մտքերն ու տրամադրութիւնները և կազդէր նրանց վրայ իւր բարոյական հեղինակութեամբ: Տարաբաղդաբար այդ գրութեան մէջ բերած «պատասխանը» ցոյց է տալիս, որ հոգեւորականներին մէջ դեռ հաստատուն պահպանուած է այն յետադիմական տեսութիւնը, որը մարդկանց բաժանում է երկու անհաւասար՝ իրարից անջրպետով դատուած դատակարգերի, մի կողմից ինչ որ փոքրահասակ յանցաւորների դադուութիւն է, որը ոչ միայն չի կարող լաւը վատից և չարը բարուց ջոկել, այլ և ոչ մի բանի մասին չի կարող մտածել՝ բացի յանցանք գործելու յարմարութիւններից, իսկ միւս կողմից՝ փոքրամիտ ընտրեալներ, անմեղ՝ թէ մտքով և թէ գործով: Նրբ կառավարութիւնը կարեւոր դատեց «վստահութիւն» յայտարարել քաղաքացիներին, եպիսկոպոսի և հոգեւորականութեան յարաբերութեան հին տեսակէտն անմիտ բան է հանդիտանում: Այս պատճառով աւելի զարմանալի է, որ Սարաաովի հոգեւորականութեան գրութիւնը ոչ թէ համակրութիւն չը դառաւ, այլ և համաժողովին չը զեկուցուեց:

— Միանգամայն բնական երևոյթ, որովհետեւ Գերմոդէնները ոչ մի բանից այնքան չեն վախենում, որքան ընտրական սկզբունքից և այդ շատ հասկանալի է, որովհետեւ այդ սկզբունքի խելացի գործադրութեան միջոցին տգիտութիւնն ու սխմանականութիւնը չէին կարող իշխել և գործի գլխին կանգնած մնալ:

«Ձեխական ժողովրդական խորհուրդը»:

Որովհետեւ չեխ ժողովուրդը բաժանուած է բաղմաթիւ մանր կուսակցութիւնների, որոնք ահագին եռանդ են վատնում մասնակի նպատակներին հասնելու համար, այդ պատճառով Պրագա քաղաքում միտք է յղացել հիմնել կեդրոնական մի մարմին, որ ղեկավարի չեխական ժողովրդական ընդհանուր կեանքը առանց կուսակցական խտրութեան և մասնակի շահերի: Այդ նպատակին ծառայում է նոր կազմած «Ձեխական ժողովրդական խորհուրդը», որի գործունէութեան ծրագիրն է հետևեալը. —

1) Ձեռք բերել և պաշտպանել պետական իրաւունքը Ձե-

խիայի սահմաններում (Չեխիայում, Մորաւիայում և Սիլեզիայում), նաև չեխական լեզուի հաւասարադօրութիւն կառաւարդութեան դործում, դպրոցում և հասարակական կեանքում: 2) Տնտեսական, կուլտուրական և ընկերվարական զարգացումն չեխ ժողովրդի՝ նրա ինքնավարութեան հիման վրայ: 3) Պաշտպանութիւն չեխ ժողովրդի նորագոյն մշակած միջոցներով այն վայրերում, որտեղ նա փոքրամասնութիւն է կազմում: 4) Ճշմարիտ և անկողմնակալ տեղեկութիւններ չեխ ժողովրդի մասին արտասահմանում և այդ նպատակաւ լրագրական յատուկ բւերօրի պահպանութիւն, որը պէտք է կանոնաւոր յարաբերութիւն պահպանի արտասահմանի մամուլի հետ:

Չեխական ժողովրդական խորհրդի յատուկ եկամուտը ստացւում է «ժողովրդական կնիք» դործածելուց, որը մտցւում է ռուսական Կարմիր Սաշի նշանի նման, բայց առաւել ընդարձակ դործածութիւն է ստանում Չեխիայում: Չեխական խորհուրդը տպում է զանազան դնի մարկաներ և դործադրութեան մտցնում հասարակական կեանքի բազմաթիւ դէպքերում. նրանք կը վաւերացնեն բոլոր ընկերութեանց հաշիւներին, ամեն տեսակ ներկայացումներին տոմսակիւններին, լրագրական յայտարարութիւններին, արեւտրական վկայականներին վրայ և այլն: Ժողովրդական այդ կամաւոր տուրքից ստացուած գումարը խորհրդի կողմից կը բաշխուի բոլոր ազգային հիմնարկութեանց, որոնց գլուխն է կանգնած «Գլխորոցական Մատիցան»: Կարծիք չկայ, որ շնորհիւ չեխական խիստ կարգապահութեան՝ նոր տուրքը ամենայն կանոնաւորութեամբ կը մանի խորհրդի գանձարանը: Գործին գլուխ է կանգնած գօքտոր Հերօլդը, որին և պատկանում է «Չեխական խորհրդի» կազմակերպութեան նախաձեռնութիւնը:

Գերմանական սոցիալ-դեմոկրատներ (բանուոր-ընկերվարական) ժողովը նկայում:

Церк. Вѣстникъ-ի № 39-ում կարդում ենք.

Գերմանիայի հասարակական կեանքի նշանաւոր երեւոյթ պէտք է համարել սեպտեմբերի 17—23 տեղի ունեցած գերմանական սոցիալ դէմոկրատներին՝ համաժողովը, որոնք իրենց ուժով երկրորդ տեղ են բռնում Բայխատագում, ունին երեք միլիօն ընտրողներ և անբող դիրք են գրաւում միջազգային ընկերվարական կազմակերպութեան մէջ: Ուստի և հասկանալի է